ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.01.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/215

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միեր Անանյանի

Մասնակցությամբ՝

«Երևանի թիվ 16 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Կ. Նորեկյանի (պետ. գրանցման վկայական՝ 03 Ա 059870)

«Երևանի թիվ 16 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ՝

Գ. Կոնդյանի (Լիազորագիր, տրված՝ 26.12.2018թ.)

Ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 25.12.2018թ. թիվ 27/26-3/24068-18 գրությամբ «Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի թիվ 16 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի 18.12.2018թ. թիվ 01 գրության հիման վրա, 25.12.2018թ. թիվ 27/26-3/24068-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/215 ընթացակարգի շրջանակներում 27.12.2018թ. ժամը 11:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է «ch-mariana@yandex.ru» էլեկտրոնային փոստի հասցեի համապատասխան էջի քաղվածք, համաձայն որի նշված էլեկտրոնային փոստից 09.12.2018թ. ժամը 20:35-ին «16hatuk@mail.ru» էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվել են «Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

3. **<u>«Երևանի թիվ 16 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Երևանի թիվ 16 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 18.12.2018թ. թիվ 01 գրությամբ հայտնել է, որ 30.12.2018թ. հրապարակվել է «Երևանի թիվ 16 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից

կազմակերպված «16ՀԴ-ԳՀԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) հրավեր:

06.12.2018թ. հայտերի բացման նիստում գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ 1-ին չափաբաժնի համար առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ն՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

07.12.2018թ. էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է ուղարկվել Ընկերությանը՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերն ու առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը:

Ընկերության հայտով ներկայացված՝ «armavirfood@mail.ru» էլ. հասցեով սահմանված ժամկետում ընդհանրապես փաստաթղթեր չներկայացնելու հիման վրա գնահատող հանձնաժողովը 13.12.2018թ. հայտերի գնահատման նիստում մերժել է առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովն առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարվել է ծանուցում ուղարկել «Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ին հայտի մերժման որոշման մասին գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրությունը «armavirfood@mail.ru» էլ. հասցեին, ինչպես նաև հրապարակել թիվ 3 արձանագրությունը:

14.12.2018թ. այլ էլեկտրոնային հասցեով ստացվել է գրություն, որ 09.12.2018թ. այլ էլ. հասցեով Ընկերությունը ուղարկել է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը և տեղյակ չեն պահել ու խախտել են հրավերի 7.18-րդ կետի պահանջները:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/215 ընթացակարգի շրջանակներում 27.12.2018թ. ժամը 11:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. <u>ՍՑ-ԱՄ-2018/215 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ԱՄ-2018/215 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Երևանի թիվ 16 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից «Երևանի թիվ 16 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար կազմակերպվել է «16ՀԴ-ԳՀԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.12.2018թ. ժամը 09:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ «Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով, որին 07.12.2018թ. սահմանված կարգով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.12.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է՝ այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը չեն ներկայացվել:

5. <u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 25.12.2018թ. թիվ 27/26-3/24068-18 գրությունը, «Երևանի թիվ 16 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի 18.12.2018թ. թիվ 01 գրությունը և կից փաստաթղթերը, «Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

«Երևանի թիվ 16 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից «Երևանի թիվ 16 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար կազմակերպվել է «16ՀԴ-ԳՀԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ն:

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու դիմումի մեջ որպես իր էլեկտրոնային հասցե նշել է «armavirfood@mail.ru»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.12.2018թ. ժամը 09:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ «Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով, որին 07.12.2018թ. սահմանված կարգով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.12.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է՝ այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը չեն ներկայացվել:

Ընկերությունը Պատվիրատուին ուղղված 14.12.2018թ. գրությամբ հայտնել է, որ «Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերն ուղարկվել են «ch-mariana@yandex.ru» էլեկտրոնային փոստից 09.12.2018թ. ժամը 20:35 րոպեին՝ «armavirfood@mail.ru» էլ. փոստի ժամանակավոր արգելափակման պատճառով:

Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է «ch-mariana@yandex.ru» էլեկտրոնային փոստի համապատասխան էջի քաղվածքը, համաձայն որի նշված էլեկտրոնային հասցեից «16ՀԴ-ԳՀԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի «16hatuk@mail.ru» էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվել են «Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ ուսումնասիրելով «Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ի կողմից ներկայացված «ch-mariana@yandex.ru» էլեկտրոնային փոստի համապատասխան էջի քաղվածքն՝ արձանագրում եմ, որ հրավերով նախատեսված փաստաթղթերը

ներկայացնելու վերաբերյալ ծանուցումը ուղարկվելուց հետո (07.12.2018թ.) սահմանված երեք աշխատանքային օրյա ժամկետում՝ ***09.12.2018թ. ժամը 20:35-ին,*** Ընկերությունը «Երևանի թիվ 16 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար կազմակերպված «16ՀԴ-ԳՀԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերում և Ընկերությանն ուղարկված ծանուցման մեջ նշված «16hatuk@mail.ru» էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկել է Ընթացակարգի հրավերով պահանջվող փաստաթղթերը, դրանով իսկ կատարելով հրավերով նախատեսված փաստաթղթերը գնահատող հանձնաժողովին ուղարկելու իր պարտականությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ն «16ՀԴ-ԳՀԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում չի խախտել ստանձնած պարտավորություն, ուստի Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 25.12.2018թ. թիվ 27/26-3/24068-18 գրությամբ «Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ին (ՀՎՀՀ՝ 04403595) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**